



«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն

Երևան, հուլիսի 7, 2009թ.

Մամլո հաղորդագրություն

Համաշխարհային առևտրի խթանման զեկույց 2009. Հայաստանը՝ 61-րդ տեղում

Համաշխարհային տնտեսական ֆորումը (ՀՏՖ) 2009 թվականին երկրորդ անգամ անցկացրեց Համաշխարհային առևտրի խթանման համեմատական վերլուծությունը 121 երկրների համար: «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնը, որպես ՀՏՖ-ի Համաշխարհային մրցունակության ցանցի գործընկեր կազմակերպություն ներկայացնում է 2009թ. զեկույցի ամփոփ տվյալները:

Զեկույցի նպատակն է վերլուծել առևտրի խթանմանը հասցեագրված քաղաքականությունները և դրանց արդյունավետությունը տարբեր երկրներում:

Համաշխարհային առևտրի խթանման ցուցիչը հաշվարկվում է առևտրի հոսքերի ազատությունը պայմանավորող գործոնները և քաղաքականությունները նկարագրող 4 հիմնական ոլորտների ենթահամաթվերի հիման վրա, որոնք ներկայացված են ստորև.

ա) շուկայի մուտքի ենթահամաթիվ, որ նկարագրում է, թե որքանով է երկիրը խրախուսում օտարերկրյա ապրանքատեսակների շրջանառությունը ներքին շուկաներում և ինչպես է նպաստում արտասահմանյան շուկաներում տեղի արտադրողների ազատ մուտքին;

բ) սահմաններում կարգավորման ենթահամաթիվ, որ ներկայացնում է թե որքանով են այս ոլորտում կիրարկվող մեխանիզմները նպաստում ապրանքների արդյունավետ հոսքին;

գ) տրանսպորտի և հեռահաղորդակցության ենթակառուցվածքի ենթահամաթիվ, որ գնահատում է, թե որքանով է վերջինս ապահովում բեռնափոխադրումների ոլորտի արդյունավետ գործունեությունը երկրի ներսում և դրանից դուրս;

դ) գործարար միջավայրը, որն անդրադառնում է արտահանման և ներմուծման ոլորտը կարգավորող դաշտին:

Զեկույցում ներառված երկրներից կրկին լավագույն կատարողականն են զբանցել Սինգապուրը և Հոնկոնգը:

2009 թվականի վերլուծության արդյունքներով Հայաստանը առևտրի խթանման ամփոփ ցուցչով գրավել է 64-րդ տեղը 121 երկրների շարքում: Այս ցուցանիշով Հայաստանը զբաղեցնում է երկրորդ տեղը ԱՊՀ երկրների շարքում:

Համաշխարհային առևտրի խթանման ցուցչի ենթացուցիչները ԱՊՀ երկրներում

Դիրք Երկիր	Առևտրի խթանման ամփոփ ցուցիչ	Շուկայի մուտքի ենթացուցիչ	Սահմանային վարչարարության ենթացուցիչ	Տրանսպորտի և հեռահաղորդակցության ենթակառուցվածքի ենթացուցիչ	Գործարար միջավայրի ենթացուցիչ
Մոլդովա	52	6	72	58	73
Հայաստան	64	42	87	61	64
Ադրբեջան	70	52	103	62	46
Ուկրաինա	71	24	95	60	85
Ղազախստան	93	45	119	63	77
Ղրղզստան	101	18	116	86	108
Ռուսաստան	109	113	106	56	96
Տաջիկստան	114	104	118	116	70
Հայաստանի դիրքի փոփոխությունը համեմատած նախորդ տարվա հետ	-3	+1	-	+16	-11

Նախորդ տարվա համեմատ Հայաստանի դիրքերը զգալիորեն բարելավվել տրանսպորտի և հեռահաղորդակցության ենթակառուցվածքի ենթացուցիչով, իսկ նվազել՝ գործարար միջավայրի որակի առումով: Սահմանային վարչարարության և շուկայի մուտքի ենթացուցիչներով Հայաստանի դիրքը գրեթե չի փոփոխվել:

Համաձայն ՀՏԲ գնահատականների՝ Հայաստանի առևտրի խթանման համակարգում լավագույն և վատագույն կատարողականն են գրանցել հետևյալ գործոնները.

Գործոն	Դիրքը	Գործոն	Դիրքը
Տրանսպորտի ոլորտում Ծառայությունների առևտրի գլխավոր համաձայնագրի (GATS) շրջանակում երկրի ստանձնած պարտավորությունները	2	Մաքսային սահմանափակումները գյուղատնտեսական ապրանքների համար	121
Օտարերկրյա աշխատուժի ներգրավման հեշտությունը	7	Մաքսային դրույքների դիսպերսիան	119
Նպատակային շուկաներում մաքսային դրույքների խտրականություն	10	Արտահանման և ներմուծման ոլորտում անօրինական մուծումները	115
Մաքսատուրքով չհարկվող ներմուծումների մասնաբաժինը	21	Բեռնափոխադրումների իրականացման հեշտությունը և մատչելիությունը	115
Կոշտ ծածկույթով ճանապարհներ	27	Մաքսային ընթացակարգերի բեռը	111
Հանցագործությունների ազդեցությունը բիզնես ծախսերի վրա	28	Մաքսային սահմանափակումները ընդհանուր առմամբ	109
Ահաբեկչության ազդեցությունը բիզնես ծախսերի վրա	28	Բեռնափոխադրումների համապատասխանությունը ժամանակացույցին	106
Առավելագույն մաքսատուրքի դրույքաչափեր	33	Լոգիստիկ ոլորտի մրցունակություն	104
Մաքսային սահմանափակումները ոչ գյուղատնտեսական ապրանքների համար	37	Ազդեցության չարաշահում	104
Մաքսային ծառայությունների ինդեքս	38	Տեղական մրցակցային դաշտ	104

«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն (EV)

«Տնտեսություն և արժեքներ»-ը մրցունակությունն ուսումնասիրող մտավոր կենտրոն է, որը ձգտում է ներմուծել զարգացման նոր հայեցակարգեր բարձրակարգ միջազգային կապերի, լավագույն որակավորում ունեցող վերլուծաբանների եւ խորհրդատուների ցանցի միջոցով:

«Տնտեսություն և արժեքներ»-ը, լինելով Համաշխարհային տնտեսական ֆորումի գործընկեր, հրատարակում է ազգային մրցունակության ամենամյա զեկույցը եւ ուսումնասիրում սփյուռքի ցանցերի, օտարերկրյա ներդրումների եւ արժեքների հետ կապված հարցերը:

«Ի-Վի Քոնսալթինգ» ՓԲԸ-ն «Տնտեսություն և արժեքներ»-ը հետազոտական կենտրոնի բիզնես խորհրդատվական կառույցն է, որը գործարար խորհրդատվական և ֆինանսական միջնորդի ծառայություններ է մատուցում նորարարության և մրցունակության ձգտող կազմակերպություններին:

Հովսեփ Էմին 123

Երևան-0051 Հեռ. +374 10 21 97 40 info@ev.am

www.ev.am, www.evconsulting.am